ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ
ПАЛАТА АУДИТОРОВ И ЭКСПЕРТ БУХГАЛТЕРОВ АРМЕНИИ
CHAMBER OF AUDITORS AND EXPERT ACCOUNTANTS OF ARMENIA
1997

ՀՀ, ք. Երևան, Մոնթե Մելքոնյան 46/2
Հեռ.: 010 24-91-78; 077 24-91-78; E-mail: info@caaa.am

ԵՆ - 415
30.10.2026թ.

ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊ ընկերությունում աուդիտորական ծառայությունների որակի հսկողության պահանջների պահպանման պլանային արտաքին գնահատում իրականացնելու մասին

Հիմք ընդունելով «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) խորհրդի արտաքին գնահատման ենթակա աուդիտորական կազմակերպությունների ցանկը հաստատելու մասին 16.12.2025թ. N35-Լ որոշումը՝ «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ աուդիտորական կազմակերպությունում իրականացնել աուդիտորական ծառայությունների որակի հսկողության պահանջների պահպանման պլանային արտաքին գնահատում:

Արտաքին գնահատման աշխատանքային խմբի անդամներն են՝ Լիլիթ Մայիլյանը - ՀԳԳՀ 1 20 0389, Արտակ Պողոսյանը - /ACCA/:

Խնդրում ենք 15-օրյա ժամկետում աշխատանքային խմբին ներկայացնել.

1. տեղեկատվություն վերջին 18 ամսում իրականացված աուդիտորական առաջադրանքների վերաբերյալ, ներառյալ՝ հաճախորդի անունը, վերջին հաշվետու տարվա ավարտը, աուդիտորական հաշվետվության ամսաթիվը, կարծիքի տեսակը, հաճախորդի գործունեության ոլորտը, առաջադրանքի գործընկերը, աշխատանքային փաստաթղթերի լեզուն, աուդիտի ժամերի քանակը, հաճախորդի հաշվետու տարվա հասույթը (հազար դրամով), հաճախորդի ակտիվները հաշվետու տարվա վերջի դրությամբ (հազար դրամով), աուդիտի գինը (դրամով), արդյոք առաջադրանքը անցել է որակի հսկողության մշտադիտարկում,
2. աշխատանքային խմբի պահանջով աուդիտորական առաջադրանքներ, որի նկատմամբ աուդիտորական կազմակերպության կողմից իրականացվել է որակի հսկողության մշտադիտարկում,
3. տեղեկատվություն հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպությունների աուդիտորական առաջադրանքների վերաբերյալ,
4. տեղեկատվություն բարձր ռիսկային կազմակերպությունների աուդիտորական առաջադրանքների վերաբերյալ,
5. կազմակերպության ներքին քաղաքականությունները, կանոնակարգերը:

Պլանային արտաքին գնահատումը իրականացվելու է ՀՀ Ֆինանսների նախարարի աուդիտորական ծառայությունների որակի հսկողության պահանջների պահպանման արտաքին գնահատման ընթացակարգերը հաստատելու մասին 07.10.2022թ N 420-Ն հրամանով սահմանված ընթացակարգի համապատասխան:

Գործադիր տնօրեն Հայկ Մնացականյան